ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 12, 1961 Общественные науки

Լ. Լ. Կարապետյան, Ա. Ղ. Շահինյան

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԴԻԼԻՋԱՆՈՒՄ

1960 թ. փետրվարին Հայկական ՍՍՌ ԳԱ Պատմության թանգարանում իրազեկ եղան այն մասին, որ Դիլիջանից 1 կմ դեպի հյուսիս-արևելք կառուցվող ջրամբարի տերիտորիայում հայտնաբերվել են հնագիտական իրեր։ Այդ շինարարական կառույցի շուրջը տարածվում է մի հնագույն դամբանադաշտ միայնակ քարարկղային թաղումներով։

Շինարարական աշխատանքների ժամանակ հայտնաբերվել են զանազան մետաղյա իրեր և խեցեղեն։

Այս հուշարձանի ուսումնասիրության նպատակով մենք պեղեցինք մի ոչ մեծ դամբարան (№ 1) շինարարության շրջապատից դուրս և մի մեծ դամբարան (№ 2) կառուցվող ջրավազանի շրջապատում։

ԴԱՄԲԱՐԱՆ № 1

Այս դամբարանը գտնվում է կառուցվող ջրավազանի տերիտորիայից դուրս։

Այն ծածկված է քարե սալով (1։1,5)։

Դամբարանի չափերն են՝ երկարությունը 1,8 մ, լայնությունը 1,10 մ և խորությունը 1,5 մ։

Պատը շարված էր մանր քարերով։ Կմախքը պահպանված էր շատ վատ և նրա դիրքավորումը որոշել հնարավոր չէր։

Կավանոթները կենտրոնացված էին հյուսիս-արևելյան մասում։ Նրանցից մեկի մեջ գտնվում էին ոչխարի ոսկորներ։

Դամբարանի հարավ-արևմտյան մասում հայտնաբերվեցին հետևյալ իրերը՝ բրոնզե դաշույն ցանցկեն գլխով և զրահի չորս բրոնզե ճարմանդներ, որոնց շուրջը դասավորված էին մանր բրոնզե կոճակներ։

Ստորև տալիս ենք № 1 դամբարանի նյութերի նկարագրությունը.

Զրահի չորս բրոնզե ճարմանդներ 6 սմ տրամագծով. սրանց եզրերը ծալված են դեպի ներս, իսկ տակից ունեն կամրջակներ ամրացնելու համար։ Ճարմանդների շուրջը դասավորված էին 92 մանր բրոնզե կոճակներ՝ տակի մասում դարձյալ կամրջակներով։ Ինչպես ճարմանդները, այնպես էլ վերոհիշյալ կոճակները ամրացված են եղել կտորի վրա, որի մնացորդները պահպանվել են։

Բրոնզե միաձույլ դաշույն, լայն տափակ եռանկյունաձև շեղբով (ծայրը կոտրված է)։ Դաստակը խողովակաձև է և ավարտվում է ցանցկեն գլխիկով (շեղբի երկ. 19,0 սմ, լայն. 5 սմ, դաստակի երկ. 10,5 սմ)։ Շեղբի վրա կան երկու ակոսներ, որոնք միանում են միմյանց հետ ներքևի մասում, իսկ դաստակի հիմքի մոտ անջատվում են։ Այդ մասում յուրաքանչյուր ակոսի վրա արված են կիսաշրջանաձև ակոսներ։



Ril. 1.



Ril. 2.

Փայտե դաստակը ծածկված է բրոնզե թիթեղով։ Դաստակի գլխիկը ծածկված է եռանկյունաձև, սուր անկյուններով իրար հանդիպակաց զարդերով։ Այդ եռանկյունիները ընդելուզված են փայտով։ Գլխիկի վրա կան նաև բրոնզի 4 փոքրիկ գամեր։

Խեցեղենը ներկայացված է մի քանի անոթներով, որոնց մեջ գերակշռում են քրեղանները։ Բոլոր կավանոթները ծածկված են սև փայլով։



Նկ. 3. Առաջին գամբարանի հատակագիծը և վերին սալի չափագրությունը

Կճուճ կարճ, անկանխ, ուռուցիկ իրանով, նեղացող հատակով։ Վիզը սեղմված է, շուրթը քիչ դեպի դուրս ծալված։ Վզից ցած կան մի քանի հորիզոնական խորադիր գծեր։ Պատրաստված է դրգի վրա (բարձր. 23,7 սմ, վզի լայն. 18,2 սմ, իրանի տրամ. 32,0 սմ, նկ. 2)։ Քրեղանները մեծ մասամբ միատեսակ են։ Նրանցից մեկը ուռուցիկ իրանով է, նեղացող հատակով։ Շրթից ցած անցնում է մի խորադիր հորիզոնական գիծ (վզի լայն. 24,0 սմ, բարձ. 13,0 սմ)։

Մյուս քրեղանը կրկնում է առաջինի ձևերը, միայն շրթի տակ ունի մի քանի հորիզոնական խորադիր գծեր (վզի լայն. 23,5 սմ, բարձր. 12,7 սմ)։

Երրորդ քրեղանը աչքի է ընկնում ինտենսիվ արված փայլով։ Իրանը կլոր է, շրթի տակ ունի մի ուղղահայաց ելուստ։ Անոթի վերին մասը ծածկված է մինչ թրծումը արված բնորոշ եռանկյունաձև գծազարդերով (շևրոն) և թեք գրիչներով։

ԴԱՄԲԱՐԱՆ № 2

Այս դամբարանը իրենից ներկայացնում է մի ուղղանկյուն քարարկղ հյուսիս-հարավ ուղղությամբ։ Տեղադրված է ջրամբարի տերիտորիայի վրա։ Դամբարանի պատերից մեկը (4 ս երկարությամբ), բացվել էր դեռևս շինարարական աշխատանքների ժամանակ։ Այդ իսկ պատճառով դամբարանի պեղումը մեր կողմից կատարվեց կողքի պատից։ Այդ պատը բաղկացած է 3 տձև բազալտե քարերից։ Դամբարանից հայտնաբերված նյութը հիմնականում կրկնում է № 1 դամբարանի կուլտուրան։ Կավամանները սև փայլով են, պատրաստված դրգի վրա։

Կճուճ մի կանթանի ուռուցիկ իրանով, ուղիղ, նեղ ցածր վզով, դուրս ծալված շրթով։ Կանթը կամարաձև է, կլոր կտրվածքով։ Իրանի վերին մասը ծածկված է խորադիր հորիզոնական ցայտուն գծերով։ Հատակը հարթ է և փոքր (բարձր. 19,5 սմ, իրանի տրամ. 25,0 սմ, բերանի տրամ. 12,0 սմ)։

Կճուճ առանց կանթի խիստ ուռուցիկ իրանով, նեղ վզով և դուրս ծալված շրթով։ Անոթի վերին մասը ծածկված է խորադիր ուղղահայաց գծերով (բարձր. 19,5 սմ, իրանի տրամ. 25,0 սմ, բերանի տրամ. 12,0 սմ)։

Մնացած կավամանները 6 քրեղաններ են, հար և նման № 1 դամբարանում գտնված քրեղաններին և նրանցից տարբերվում են միայն զարդանախշերով։ Այդ քրեղաններից հինգը սև են և փայլուն (մեկը գորշագույն է), ուռուցիկ իրանով և քիչ դուրս ծալված շրթով։ Վերին մասում կան ցանցավոր և զիգզագաձև զարդանախշեր։ Չափսերը՝ բերանի տրամ. 10-ից մինչև 24 սմ, բարձր. 12,0 մինչև 16 սմ։

Այս դամբարանի կավանոթների մեջ կար նաև մի լայնաբերան ման, ծածկված սև փայլով, քիչ նեղացող ցածր ուղիղ վզով, դուրս ծալված շրթով և իրանի վրա խորադիր եղևնաձև զարդանախշով (բարձր. 13,5 սմ, իրանի տրամ. 17,0 սմ, բերանի տրամ. 14,5 սմ)։

Դամբարանից գտնվեց նաև մի սև փայլով կավանոթ, ուռուցիկ իրանով և դուրս ծալված շրթով (բերանի լայն. 12,5 սմ, բարձր. 11,5 սմ, իրանի տրամ. 17,0 սմ)։

Այս անոթի վզից ցած անցնում է մի ստորակետաձև և սուրանկյուն զարդանախշ (բարձր. 11,5 սմ, իրանի տրամ. 17,0 սմ, բերանի տրամ. 12,0 սմ)։

Կավանոթների այս խումբը լրացնում է նույն դամբարանում գտնված մի կանթանի գավաթ։ Գավաթի բերանը քիչ նեղացված է, շուրթը դուրս ծալված։ Իրանի վրա կան երկու հորիզոնական ուռուցիկ գծեր։

ԽԱՌԸ ԿՈՄՊԼԵՔՍ

Ջրավազանի կառուցման ժամանակ, բացի դամբարաններից հայտնաբերվեցին նաև մետաղյա իրերի և կերամիկայի մի մեծ խումբ, որոնք տվյալ էպոխայի վերաբերյալ որոշ հետաքրքրություն են ներկայացնում։

Բրոնզե դաշույն, երկսայր (նկ. 4) տափակ ռոմբաձև շեղբով, ուժեղ արտահայտված միջին ակոսով (շեղբի երկ. 19,5 սմ, դաստակի երկ. 8,5 սմ, լայն. 9,5 սմ)։ Դաստակի տակ ունի կետագծերից կազմված կիսաշրջաններ։

Դաստակի փայտը ծածկված է բրոնզե թիթեղով։ Դաշույնի դաստակը ունի բրոնզե գլուխ, որի վրա կան եռանկյունաձև փոսիկներ՝ փայտե ընդելուզվածքի համար։



Bild. 4.

Bild. 5.

Նիզակի ծայր, երկաթից (նկ. 6) կարճ, տափակ, տերևաձև շեղբով, թույլ արտահայտված միջին ակոսով և կարճ սնամեջ ագուցվող մասով (երկ. 18,0 սմ, ագուցվող մասի երկ. 7,0 սմ, շեղբի երկ. 11,0 սմ)։ Գտնվել է ջրավազանի մեջ։

Ձիասանձ երկաթից, գտնվել է ջրավազանի հակառակ կողմում, խճուղու կառուցման ժամանակ[1]։ Ձիասանձը ունի ուղիղ երախակալներ և միմյանց մեջ ագուցվող լկամներ։ Բանվորների վկայությամբ, հողային աշխատանքների ժամանակ այս ձիասանձի հետ նրանք հայտնաբերել էին ձիու և մարդկային կմախքներ և սև փայլով մի կավանոթ՝ վերադիր կենդանական պատկերներով (նկ. 6)։ Այդ անոթի կանթը անորոշ ձևի է, իսկ նրա տակ պատկերված է վերադիր զալարվող մի օձ։ Իրանի վրա կան նաև հինգ հորիզոնական վերադիր գծեր (բարձր. 33,0 սմ, իրանի տրամ. 24,0 սմ, բերանի տրամ. 7,0 սմ)։

Այսպիսով դա մի շատ հետաքրքիր թաղում է եղել ձիու հետ միասին, որ բնորոշ է ինչպես քննարկվող ժամանակաշրջանի, այնպես էլ նրանից ավելի վաղ շրջանի համար։

Վարսակալներ (2 հատ) շրջանաձև, մեջտեղը ալիքաձև ելուստով (նկ. 4)։

Մանյակ բրոնզե, ոլորուն, մասսիվ, ծալված ծայրերով (տրամ. 16,6 սմ)։

Նման տիպի առարկաները բնորոշ են տվյալ ժամանակաշրջանի համար և Անդրկովկասում շատ են հանդիպում։

Վարսակալներ (մեկ զույգ) վերոհիշյալի նմանողությամբ, քիչ ավելի փոքր (տրամ. 10,5 սմ և 10,0 սմ) հարթ լարից, ծալված ծայրերով (նկ. 6)։

Ապարանջան, ոչ մեծ, մասսիվ, կլոր ձողից, ծայրերը ոճավորված են և մեկը մյուսի վրա են գալիս (նկ. 4)։ Ապարանջանի վրա կան թեք գծիկներ (տրամ. 6,5 սմ, ձողի հաստ. 8 մմ)։

Ապարանջաններ (մեկ զույգ) տափակ ձողից միմյանց վրա եկող ծայրերով (նկ. 4) (տրամ. 5,5 սմ, հաստ. 1 սմ, երկրորդ ապարանջանի տրամ. 5,0 սմ, հաստ. 1 սմ)։

Օղակ բրոնզե լարից 2 սմ տրամագծով կազմված 7 ոլորներից։

Զարդարանքների մեջ կան նաև հինգ տակառաձև սերդոլիկե ուլունքներ, որոնց անցքերը բացված են միայն մի կողմից։ Սերդոլիկե, սպիտակ երկնագույն պաստայից մանր ուլունքներ, սնամեջ բրոնզե խողովակներ։ Խեցեղեն ներկայացված է հինգ անոթից։

Կճուճ սև փայլով, ուռուցիկ իրանով, նեղ կարճ վզով և դուրս ծալված շրթով։ Շուրթը ծալվող մասում ունի ելուստ և վերին մասում ճեղքվածք (բարձր. 23,0 սմ, վզի լայն. 8,5 սմ, իրանի տրամ. 21,6 սմ)։ Վզի վրա կան փայլով արված լայն ժապավեններ, իսկ վզի տակ շորս հորիզոնական ակոսներ, որոնցից ցած անցնում է մի լայն զիգզագաձև զարդանախշ։ Իսկ դրանից ցած՝ իրանի կենտրոնով անցնում է մի գոտի, կազմված երկու ակոսներից, որոնց արանքում փայլով արված են զիգզագներ։

Կճուճ մեծ, սև, փայլեցրած, ուռուցիկ բիկոնիկ իրանով, նեղ վզով և դուրս ծալված շրթով։ Անոթի վերևի մասում արված են հերթականությամբ կրկնվող եռանկյունիներ, որոնք լցված են խորադիր կետերով և կարճ զիգզագներով (նկ. 5)։

---

1 Գտնվում է Դիլիջանի պավառագիտական թանգարանում։

Կճուճ միջին մեծության, սև, անհավասար փայլեցրած, տեղ-տեղ մոխրագույն։ Իրանը խիստ ուռուցիկ է, վիզը նեղ, շուրթը քիչ դուրս ծալված։

Քրեղանները երեքն են։ Ոչ մեծ, կարմրավուն, փայլեցրած, երկուսի շրթերը քիչ ծալված են, իսկ երրորդը կտրված շրթով է։ Իրանի վրա կա եզունգային նախշ և խորադիր հորիզոնական գծեր (նկ. 5)։

Այս խմբի մեջ մտնում է և մի մոխրագույն կճուճ, որի ուռուցիկ իրանի վրա կան վերադիր զիգզագներ։

* * *

Մեր ձեռքի տակ եղած նյութի համառոտ քննությունն իսկ պարզ ցույց է տալիս, որ այն կարելի է վերագրել մ. թ. ա. 8—7-րդ դարերին։

Այժմ մ. թ. ա. 2-րդ հազարամյակի վերջերի և 1-ին հազարամյակի սկզբի կուլտուրան ներկայացված է Հայաստանի տարբեր մասերից և Անդրկովկասից հայտնաբերված հարուստ հնագիտական նյութերով։

Քննենք մեր նյութը ըստ կոմպլեքսների։

Վերը նկարագրված № 1 գամբարանի նյութերը շատ նման են Հայաստանի մյուս շրջաններից հայտնաբերված առարկաներին։ Այսպես, օրինակ, Գոլովինոյի գամբարաններից ևս գտնվել են իրեր, որոնք վերագրվում են մ. թ. ա. 2-րդ հազարամյակի վերջին և 1-ին հազարամյակի սկզբին[2]։

Անդրկովկասի տերիտորիայում հայտնի են նաև նույնանման դաշույններ (մ. թ. ա. 1-ին հազարամյակի սկիզբը), երբեմն այդ դաշույններից հանդիպում են Հյուսիսային Կովկասի գամբարաններում։ Մի այդպիսի դաշույն էլ գտնվել է Արթիկի գամբանադաշտից[3]։

Այդ դաշույններն իրենց գոյությունը շարունակել են նաև երկաթի լայն զարգացման շրջանում (մ. թ. ա. 7—6-րդ դարերում)։

Կավանոթները նմանվում են Գոլովինոյի[4], Խրտանացի և Լալվարի, ինչպես նաև մ. թ. ա. 8—7-րդ դարերին պատկանող ուրարտական բնակատեղիներից հայտնաբերված խեցեղեններին։

Քրեղանների տիպերը շատ լայն տարածում ունեն ամբողջ Հայաստանում. նրանք բնորոշ են և Խրտանացի[5], և Լալվարի[6] ու Սևանի ավազանի[7], ինչպես նաև մյուս վայրերի համար։

№ 2 գամբարանում հայտնաբերված խեցեղենը իր օրինակներն ունի Կարմիր բլուրի միջնաբերդից հայտնաբերված ամանների մեջ, Սևանի ավազանի գամբարաններում[8] և վերապրուկային ձևով ավելի ուշ ժամանակաշրջ-

---

2 Հ. Հ. Մնացականյան, Գամբարանների պեղումները Գոլովինո գյուղում, Պետ. Պատմ. թանգ. աշխատ., հ. 6, 1959։

3 Թ. Խաչատրյանի պեղումները, նյութը հրատարակված չէ։

4 А. А. Мартиросян, «Раскопки в Головино», стр. 27.

5 Նույն տեղում։

6 Նույն տեղում։

7 Ե. Լալայան, Գամբարանների պեղումները Խորհրդային Հայաստանում, 1931, էջ 145։

8 Նույն տեղում, նկ. 28։

ջանի դամբարաններում, ինչպես, օրինակ Իջևանում (մ. թ. ա. 5—4-րդ դարերում)[9]։

Նույնանման քրեղանների հանդիպում ենք նաև ինչպես Կիրովականում, այնպես էլ Մարտունու շրջանի Ն. Գյոդալդարա (Վարդաշեն) գյուղում։

Խառը կոմպլեքսի նյութերը հետաքրքիր են իրենց տարբերակներով։ Այսպես, տափակ-ոոմբաձև շեղբով բրոնզե դաշույնը հայտնի է Դոլովինոյի № 1 դամբարանից[11], ինչպես նաև Իվանովսկու պեղումներից Դետաբեկում, Լալայանի պեղումներից Սևանի ավազանում և վերաբերվում է մ. թ. ա. 9-րդ դարին։

Մեր կողմից գտնված երկաթե նիզակի ծայրը հանդիպում է Հայաստանի դամբարաններում ավելի խոշոր նիզակների հետ։ Սրանց զարգացումը գնում է բրոնզե իրերի նմանողությամբ, որը ապացուցվում է նրանց ավելի բնորոշ արտաքին ձևերով։

Նկ. 6։

Այդպիսիք հանդիպում են մ. թ. ա. 7—6-րդ դարերում և ավելի ուշ շրջանի կոմպլեքսներում։ Սբնակի և Ղաչաղանի դամբարաններում այդ նիզակները հանդիպում են ավելի ուշ շրջանի սկյութական նետասլաքների հետ (5-րդ դար մ. թ. ա.)[12], ինչպես նաև Զանգեզուրում, Լալվարում և այլուր։

Մ. թ. ա. 7—6-րդ դարերում Անդրկովկասյան դամբարանները և Կարմիր բլուրի ամրոցի պեղումները տվել են առատ նյութ՝ մեր ձիասանձերի նմանողությամբ։

---

9 С. Есаян, «Археологические находки в Иджеване», «Известия» АН АрмССР, № 4, 1961.

10 А. А. Ивановский, «По Закавказью», табл. 12, рис. 11 (Материалы по археологии Кавказа, вып. VI, М 1911).

11 Հ. Հ. Մնացականյան, նշված աշխատ., էջ 11։

12 Հ. Ա. Մարտիրոսյան, նշված աշխատ., էջ 68։

Մանյակները բնորոշ են տվյալ շրջանի համար և հանդիպում են Անդրկովկասի շատ շրջաններում՝ Խրտանացում[13], Ն. Բայազետում[14], Սևանի ավազանում[15], Սաղարեջոյում (Վրաստան) և այլուր։ Փոքրիկ մանյակները բացի վերոհիշյալ շրջաններից հանդիպում են նաև Բասարգեչարում[16]. ուրարտական Կարմիր բլուր ամրոցից և Ծովինարից ունենք օձագլուխ կոպիտ պատրաստված բրոնզե ապարանջաններ, որոնք հիշեցնում են մեր ապարանջանները։

Շատ լավ է կապվում այդ ապարանջանների ոճին նաև Աթարբեկյանում գտնված արծաթյա ապարանջանը[17]։

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում անշուշտ նաև կենդանազարդ կավամանը, որը հայտնի է Ն. Բայազետի շրջանի պեղումներից (թանգարանային համարը 22/33), ինչպես և Սանահինից գտնված ամանը, որոնք թվագրվում են մ. թ. ա. 2-րդ հազարամյակի վերջով և 1-ին հազարամյակի սկզբով։

* * *

Այսպիսով ի մի բերելով մեր նյութի ուսումնասիրության արդյունքները, կարող ենք ասել, որ այն հնարավորություն է տալիս հաստատելու կուլտուրական սերտ կապերի առկայությունը մի կողմից ուշ ուրարտական և վաղ սկյութական կուլտուրայի, իսկ մյուս կողմից նրա միատիպությունը Հայաստանի և Անդրկովկասի մ. թ. ա. 7—6-րդ դարերին պատկանող դամբարաններից գտնվող նյութերի հետ։

Տեղական կուլտուրայի կապերը ուրարտական ադմինիստրատիվ կենտրոն Թեյշեբաինի քաղաքի հետ, որոնք գրավոր աղբյուրների հիման վրա հաստատ թվագրվում են մ. թ. ա. 7—6-րդ դարերին. ցայտուն կերպով հաստատում են նաև ինչպես երկաթե իրերի (ձիասանձերի), խեցեղենի, այնպես էլ զարդարանքների (ուլունքներ) միջոցով։ Որոշ պատահաբար գտնված իրեր պատկանում են ավելի վաղ շրջանին (մ. թ. ա. 9—8-րդ դարերին)։ Այդ հանգամանքը հիմք է տալիս կարծելու, որ մեր դամբանադաշտը տարբեր ժամանակաշրջանների է, և պատկանում է տեղաբնակ ցեղերին։

---

13 Հ. Ա. Մարտիրոսյան, նշված աշխատ., էջ 41։

14 Ե. Լալայան, նշված աշխատ., էջ 176։

15 А. А. Ивановский, указ. соч.

16 А. О. Мнацаканян, Археологические находки в сел. Басаргечар, АрмССР. КСИИМК, в. 60, 1955.

17 А. О. Мнацаканян, Раскопки могильников у сел. Атарбекян в Армянской ССР КСИИМК, в. 60, 1955, стр. 37.